ԿՈՎԿԱՍԻ ՓՈԽԱՐՔԱՅԻ ՎԵՐԱԴԱՐՁԻ ԱՌԻԹՈՎ.

—

Անցեալ կիրակի, նոյեմբերի 2-ին, Կովկասի Փոխարքայ կոմս Վորոնցով-Դաշկովն իր ընտանիքով ժամանեց Թիֆլիզ։

Կովկասի ամբողջ ազդաբնակութիւնն առանձին անհամբերութեամբ սպասում էր այդ գալստեան։

Բազմացեղ և բազմալեզու երկրի շատ քիչ ղեկավարներ այնպիսի խորը յարգանք ու անկեղծ սէր են վայելել, որպիսին երկրի ներկայ ղեկավարը։

Շատ դժուար շրջանում նա կոչուեց երկրի բարձր ու պատասխանատու պաշտօնի։ Մի կողմից կեանքը հրապարակի վրայ էր դրել ամբողջ Ռուսաստանի, հետևաբար և նրա անբաժան մասի — Կովկասի վերանորոգութեան պահանջը, միւս կողմից՝ մեր երկիրը ասպարէզ էր ազգադաւ ու եղբայրասպան այնպիսի արիւնհեղութիւնների, որ անկարող էին դարձնում երկրի համար բարենորոգումների իրագործումը։

Այդպիսի բարդ պարագաներում կոմս Վորոնցով-Դաշկովը ցոյց տուեց իսկական վարչագէտին յատուկ հրամտութիւն և իր բարձր պաշտօնին պատիւ բերող մարդասիրութիւն.

Նա բարձրացրեց իր պաշտօնի պրէստիժը։

Կովկասը յարգում, սիրում է իր իշխանաւորին, այսքանը բաւական է, որ սև ու մութ ոյժեր — Ռուսաստանի խաղաղացման և զարգացման իսկական թշնամիները — իրանց ինտրիգները լարէին և փորձէին դժուարացնել մեր երկրի խաղաղ զարգացման գործը և, եթէ կարելի է, նոյնիսկ ընդհատել ներկայ ղեկավարի բարերար գործունէութիւնը։

Եւ ամեն անգամ, երբ Փոխարքան գնում էր մայրաքաղաք, սկիզբն էին առնում թեր ու դէմ լուրեր, թէ «Կովկասը պէտք է նորից յետ նուաճել», որ մեզ համար հաւասար էր հին՝ Գոլիցինեան աղետաբեր ռէժիմի դարձին։

Երբ վերջին անգամ կոմսը մեկնեց Ռուսաստան, այդ

լուրերը կարծես առանձին յամառութիւն ստացան և բամբասաբեր ու զրպարտող մամուլը ձայնակցեց խաւար ոյժերին։

Ահա թէ ինչու Կովկասը ջղայնութեամբ սպասում էր կոմսի այս անգամուայ դարձին, ահա թէ ինչու այնքան գրկաբաց ընդունեց նա իր սիրելի իշխանաւորին։

Կովկասի Փոխարքայի անձի հետ կապուած է մեր երկրի անհրաժեշտ բարենորոգումների իրականացման խնդիրը։

Փոխարքայի վերադարձը Կովկասի համար գաղափարի յաղթանակի նշանակութիւն ունի։

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

Փրկութեան բանակը.—Փրկութեան բանակը հիմնել է Սամուէլ Բուտսը (ծն. 1829 թ.) 1865 թ. որի ճիւղաւորութիւնները տարածուած են բոլոր քաղաքակիրթ երկրներում։ Բարու և ճշմարտութեան գաղափարների եռանդուն քարոզութիւնների շնորհիւ նրան յաջողւում է ստորագրութիւն բանալով ահագին գումար ժողովել, որպէս զի հիմնուեն արհեստանոցներ, ապաստաններ, գաղութներ, պահեստներ և այլ այնպիսի հիմնարկութիւններ, որ փրկութեան բանակի անդամները կարողանային ապաստան, աշխատանք և սնունդ ստանալ։ Փրկութեան բանակի առաջնորդներն ու քարոզիչները գլխաւորապէս յարձակւում են ալկոհոլիզմի դէմ։ Եւ շնորհիւ եռանդուն ճառերի, որոնցով նրանք ցոյց են տալիս արբեցողութեան սարսափելի վնասները, փրկութեան բանակը խտացրել է շաբաթը լրջութեան ձգտումներով տոգորուած բազմաթիւ անձերով։ Ամեն օր, երեկոյեան ժամի 7-ին փրկութեան բանակին պատկանող բոլոր համայնքների ապաստաններում տեղի է ունենում երեկոյեան պաշտամունքը, որին ներկայ գտնուելը անդամների համար կամաւոր է։ Սակայն միշտ մասնակցողները բազմաթիւ են լինում, և այդ անբաղդ, անտուն, կեանքի կռուում ընկած մարդկանց մէջ, որոնք օգնութիւն են որոնում փրկութեան բանակում, տիրապետում է կատարեալ կարգ,